## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԻՐՈՎՅԱՆ ՌԱՅՈՆԻ № 43 ԱԲՈՎՅԱՆԻ

## ԸՆՏՐԱԿԱՆ ՕԿՐՈՒԳ

### ՕԿՐՈՒԳԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԴԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳՐԱՆՑԵՑ

# ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

«Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության» 54-րդ հոդվածի հիման վրա օկրուգային ընտրական հանձնաժողովը որոշեց.

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատության թեկնածու գրանցել ընկ. Վիկտոր Համազասպի Համբարձումյանին, ծնված 1908 թվին, ՀամԿ(բ)Պ անդամ, ապրում է Երևան քաղաքում, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, որի թեկնածությունը առաջադրվել է Ակադեմիայի գիտական աշխատողների նախընտրական ժողովում:

Ընտրությունների կանոնադրության 57-րդ հոդվածի հիման վրա ընկ. Վ. Հ. Համբարձումյանի թեկնածությունը մտցնել ընտրական բյուլետենի մեջ՝ Երևան քաղաքի Կիրովյան ռայոնի № 43 Աբովյանի ընտրական օկրուգում քվեարկվելու համար: